# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2025/2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ), ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ (ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԵՎ ԻՆՏԵՐՆԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| h/h | Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Լաուրա Թումասյան<br>12.06.2025 22:34:09 | Բացի անվճար տեղերի հատկացումից, կարծում եմ, որ կարևոր է հստակեցնել ընդունելության մրցութային չափանիշները: Հետևաբար, առաջարկում եմ լրացուցիչ միավորներ ունենալ հետևյալի համար. Բարձր առաջադիմություն ուսման ընթացքում: Գիտական կամ հետազոտական աշխատանքներ բժշկության ոլորտում: Կամավորական աշխատանք առողջապահական հաստատություններում: Զինվորական ծառայություն անցած լինելը (հատկապես ինտերնատուրայի դեպքում): Առաջարկում եմ նաև հստակ մեխանիզմներ սահմանել, որոնք կապահովեն շրջանավարտների աշխատանքային պրակտիկան թիրախային | Նպատակային կլինիկական օրդինատուրայի ընդունելությունը իրականացվում է մրցութային կարգով: Մրցույթն անցկացվում է Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի և Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի կողմից հաստատված կանոնակարգերի հիման վրա: Ինտերնատուրայում տեղերի հատկացումը նախատեսում է կարգավորել ՀՀ զինված ուժերում առկա բժշկական կազմի | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ոլորտներում (ՀՀ զինված ուժեր, մարզային առողջապահական հաստատություններ): Սա կարող է ներառել պայմանագրային պարտավորություններ որոշակի ժամկետով (օրինակ՝ 3-5 տարի): | թերհամալրվածության խնդիրը: Ինտերնատուրայի շրջանավարտները պարտադիր պայմանագրային ծառայության են անցնում ՀՀ զինված ուժերում: | |
| 2 | Աննա Բաբլանյան<br>07.06.2025 22:07:27 | Որպես մանկավարժ և բարձրագույն կրթության ոլորտի մասնագետ, կարևորում եմ նմանատիպ նախաձեռնությունների իրականացումը, քանի որ դրանք միաժամանակ լուծում են ինչպես կրթության որակի բարձրացման, այնպես էլ հանրային առողջապահական ոլորտի մարդկային ռեսուրսների համալրման խնդիրները: Ներկայացված նախագիծը արժանահավատ և հիմնավորված է, քանի որ՝ • հիմնված է գործող օրենսդրության դրույթների վրա, • արտացոլում է ոլորտային վերլուծության արդյունքները, • կանխատեսում է համակարգային բարեփոխումների հիմք, • ներառում է շարունակական կրթության տրամաբանությունը՝ ուսումնական գործընթացից մինչև աշխատանքային տեղաբաշխում: Բացի այդ, նախագծում տեսնում ենք մանկավարժական և կրթական տեսանկյունից մի շարք դրական մոտեցումներ՝ ✓ նպատակային ուսուցման մոդել, ✓ մրցութային ընդունելություն, ✓ ուսումնառության ընթացքում ֆինանսական աջակցություն, ✓ պարտադիր տեղաբաշխում ըստ համակարգային պահանջարկի: Այնուամենայնիվ, պետական ռեսուրսների արդյունավետ բաշխման և համակարգային շահերի առավելագույն ապահովման նպատակով առաջարկում եմ հաշվի առնել հետևյալ կետերը՝ Օրինակ՝ հավելվածում | Նախագծի հիմնավորման մեջ նշված են առավել պահանջարկ ունեցող մասնագիտությունները: Տեղերը բաշխելիս հիմք է ընդունվել կադրային պահանջարկը: Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցում ստացած օրդինատորները, ուսումն ավարտելուց և ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունք ձեռք բերելուց հետո, պարտավորվում են աշխատանքային պայմանագիր կնքել Առողջապահության նախարարության առաջարկած կազմակերպության հետ՝ վերջիններիս առաջարկած պայմաններով, առնվազն 3 տարի ժամկետով: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հստակ նշել այն բժշկական մասնագիտությունները, որոնցում թերհամալրվածություն կա՝ մասնավորապես մարզային առողջապահության և զինված ուժերի ծառայության մեջ: Օրինակ՝ ընտանեկան բժիշկ, , ռազմաբժշկական փորձագիտություն և այլն: Տեղեկատվությունը անհրաժեշտ է տարածել պաշտոնական հարթակներով ժամանակին, որպեսզի դիմորդները կարողանան ճշգրիտ կողմնորոշվել՝ ինչպես մասնագիտության, այնպես էլ ընդունելության պայմանների առումով: Նախատեսել մեխանիզմ, ըստ որի ուսումը պետության կողմից ֆինանսավորվի պայմանով, որ շրջանավարտը աշխատի համապատասխան հաստատությունում (օրինակ՝ մարզային ՊԲԿ, ՁՈՒ հոսպիտալ) նվազագույն 3-5 տարի ժամկետով: Սա կերաշխավորի ներդրված ռեսուրսների վերադարձն ու նպաստառու հատվածների իրական համալրումը: Ինչպես նաև ներկայացնել ուսումնական հաստատություններին առաջարկություն՝ նպատակային օրդինատորների հետ իրականացնել հատուկ կարիքներին համապատասխան մասնագիտական կողմնորոշման ծրագրեր, որպեսզի ուսանողներն իրապես պատրաստ լինեն աշխատել հատկապես մարզային առողջապահական հաստատություններում: Կառաջարկեմ նաև պետության աջակցությունն առավելապես հասանելի դարձնել նաև սոցիալապես խոցելի խմբերին, հատկապես՝ բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտներին՝ սահմանելով լրացուցիչ դրույթներ կամ արտոնություններ: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Հաստատելով այս նախագիծը՝ պետությունն ապահովում է կրթության շարունակականության և սոցիալական նպատակայնության համատեղ իրականացումը, ինչը լիովին համահունչ է ժամանակակից մանկավարժության արժեքներին: | | |
| 3 | Լուսինե Մինասյան<br>07.06.2025 22:00:50 | Առաջարկում եմ անվճար տեղերը հատկացնելիս առավելությունը տալ մարզաբնակներին `պայմանով,որ ավարտելուց հետո վերադառնան և համալրեն մարզային առողջապահության համապատասխան հիմնարկները:Դրա արդյունքում մարզային առողջապահության կադրային պահանջարկը կբավարարվի: | Սույն նախագծի նպատակը մարզերի կադրային պահանջարկի համալրումն է: Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցում ստացած օրդինատորներն ուսումն ավարտելուց և ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունք ձեռք բերելուց հետո, պարտավորվում են աշխատանքային պայմանագիր կնքել Առողջապահության նախարարության առաջարկած կազմակերպության հետ՝ վերջիններիս առաջարկած պայմաններով, առնվազն 3 տարի ժամկետով: | |